ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2469 - Ա **09 ապրիլի 2009թ.**

ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՓՈՂՈՑԻ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ Հ. 19/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՈՐԻԿ ՀԱԿՈԲԻ ԱՍԼԱՆՅԱՆԻ, ԱՐՓԵՆԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ, ՌՈԲԵՐՏ ՌԱԶՄԻԿԻ ԱՍԼԱՆՅԱՆԻ, ԱՐՇԱԿ ՌԱԶՄԻԿԻ ԱՍԼԱՆՅԱՆԻ, ՀԱԿՈԲ ՌԱԶՄԻԿԻ ԱՍԼԱՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Նորիկ Հակոբի Ասլանյանի (ծնված 10.03.1930թ.), Արփենիկ Համբարձումի Համբարձումյանի (ծնված 00.00.1928թ.), Ռոբերտ Ռազմիկի Ասլանյանի (ծնված 10.01.1954թ.), Արշակ Ռազմիկի Ասլանյանի (ծնված 22.05.1955թ.), Հակոբ Ռազմիկի Ասլանյանի (ծնված 27.10.1958թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Բագրատունյաց փողոցի 3-րդ նրբանցքի հ.19/1 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 768.03քմ, որից 640քմ մակերեսով հողամասը Նորիկ Հակոբի Ասլանյանին, Արփենիկ Համբարձումի Համբարձումյանին, Ռոբերտ Ռազմիկի Ասլանյանին, Արշակ Ռազմիկի Ասլանյանին, Հակոբ Ռազմիկի Ասլանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 128.03քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1947 թվականը, 26.01.2009թ. ժառանգության իրավունքի վկայագիր, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման 06.10.2008թ. հ.8828, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 01.04.2009թ. հ.20/2-Ե/171 գրությունները, Երևանի քաղաքապետարանի <Քաղաքաշինություն>> ՊՓԲԸ-ի 23.03.2009թ. հ.20-Ել-2186 եզրակացությունը, համաձայն որի Բագրատունյաց փողոցի 3-րդ նրբանցքի հ.19/1 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Բագրատունյաց փողոցի 3-րդ նրբանցքի հ.19/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Նորիկ Հակոբի Ասլանյանի, Արփենիկ Համբարձումի Համբարձումյանի, Ռոբերտ Ռազմիկի Ասլանյանի, Արշակ Ռազմիկի Ասլանյանի, Հակոբ

Ռազմիկի Ասլանյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 640քմ մակերեսով հողամասին կից 128.03քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 128.03քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Բագրատունյաց 3-րդ նրբանցքի հ.19 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Բագրատունյաց փողոցի 3-րդ նրբանցքի հ.19/1 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Նորիկ Հակոբի Ասլանյանի, Արփենիկ Համբարձումի Համբարձումյանի, Ռոբերտ Ռազմիկի Ասլանյանի, Արշակ Ռազմիկի Ասլանյանի, Հակոբ Ռազմիկի Ասլանյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Շենգավիթ թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**